# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

07.06.2017թ.-ին կնքված N «ՇՄԱՔ-ԳՀԾՁԲ-17/49-02» ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Արթիկ** **23 -ը սեպտեմբերի 2017թ.**

<<Արթիկի համայնքապետարանը>> ի դեմս համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լամարա Պողոսովայի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի պահանջներով և Հիմք ընդունելով Արթիկի համայնքապետարանի և «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի միջև 07.06.2017թ.-ին կնքված «ՇՄԱՔ-ԳՀԾՁԲ-17/49-02» պայմանագրի 7.5-րդ կետը կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Փոփոխել Պայմանագրի գինը և նվազեցնել Պայմանագրի գումարը **37 090 (երեսունյոթ հազար իննսուն)** ՀՀ դրամ-ով, այն սահմանելով **371 910 (երեք հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր տասը)** ՀՀ դրամ: (Պայմանագրի փոփոխության պատճառ է հանդիսանում ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով Կատարողի կողմից մատուցման ենթակա Պայմանագրով նախատեսված ծառայությունների քանակի նվազեցումը)

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՇՄԱՔ-ԳՀԾՁԲ-17/49-02» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան | «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ |
| Ք. Արթիկ, Ազատության հրպ. թիվ 1 | ՀՀ Լոռու մարզ, |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | ք. Վանաձոր, Վարդանանց 23/159 |
| գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ Վանաձորի մ/6 |
| Հ/Հ 900202321015 | Հ/Հ 205022201763-1001 |
| ՀՎՀՀ 06101029 | ՀՎՀՀ 06938925 |
| Համայնքի ղեկավար՝ Մ. Վարագյան | Տնօրեն՝ Լ. Պողոսովա |
| | ազգանուն, անուն |
| (ստորագրություն) | ստորագրություն |
| Կ.Տ. | Կ.Տ |